

ԱՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ Ա.ԱՏՈՒՄԾԱԲԱՆԻ

ՆԵՐԱՊՈՂԵԱՆ

Ի ՍՈՒՐԲ ԻԱԶՆ ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ

Երկինք պատմեն զփառս Աստուծոյ :
Ամենայն տառը մարգարէականը ի Հոգոյն
սրբոյ ազգեալը՝ ըստ հոգոյն արժանաւու-
րեալը, զերազունին առ միմեանս զշնոր-
հացն բերումն է որ զանցելոց իրակեր-
պութեանցն պատմէ զգործ . և է որ ձեռն
պատրաստ՝ ըստ ժամանակին տայ զգի-
տութիւնն . և է որ զալազայիցն ներբողէ
զհրաշ : Ոչ հակառակ միմեանց զօտա-
րոտիս բանիցն դաստիարակեալ . այլ որ
զհաճոյից հոգուոյն յարմարութիւն վայել-
չաբար՝ յայլելյայլ խորհուրդն աճեցու-
ցեալ : Ե որ առաւելապէս, և է որ չա-
փաւորաբար ըստ մատակարարութեան ի
զանազանս բաշխելով զշնորհն : Խակ
դաւթեան երգոյն՝ համասիխ վայելչա-
տարած զեղգեղենն տառը . ի տեսականն՝
և իմացականն, զառանին՝ և զհանդերձե-
լոցն միանգամայն բերէ զիսորհուրդն .
յայտնի և մարգարէական փառաւորու-
թիւնն : Նաեւ բազում ազգի ազգի ունի
տեսակս փրկութեան անձինն . քանզի
աւետարեր բանիւը զցնութիւն աւետա-
բանէ . և ողբերգականաւն զիրկութիւն և
զդարձ մեղաւորաց . և ընդ նմին զկազմածս
արարածոց պատմէ . ընդ նոսին և զիջա-
նել զտնօրինականսն Քրիստոսի ի լոյս ա-
ծեալ կացուցանէ : Ի բազում և ի պէսպէս
զնացս աստուածային պողոտայիցն՝ հպե-
ցուցանէ զբանիցն յարմարականսն : Եւ
արդ աստանօր՝ զերկնից ասէ պատմել
զփառս Աստուծոյ : Եւ որ զտեսականն
պատմէ՝ որ ամենեցուն յայտնի է . և է
որ զլինելոցն նշանակէ . քանզի արդարեւ

պատմիչ է Աստուծոյ մեծասքանչ զօրութեանցն յինքն բերելով զարարչական ներգործութեանն զհանգամանս մեծվայել չաբար, իբրեւ փողով զոչէ, անազդեցող լուսութեամբ քարոզէ, ոչ երաժշտական ձայնի, այլ որ նայելաւն ունի զհաստատութիւն իրացն. զի ահա զլուսաւորացն զընթացն և զկարգ աստեղացն ամենայն զարդուն երկնից ցուցցէ զգործս ձեռաց Աստուծոյ բանիւ, և ոչ այլ ինչ յումերէ ձեւացեալ, և զլեալսն ի սկզբանէ խորհրդաձէ: Եաւ զապազայիցն մարզարէանայ, և պատմէ զճշմարիտ փառացն որով յայլմէ զփառսն ընծայեցուցանէ, որ է ժամանակիս պիտանացու: Իսկ երկնից լինել պատմիչ՝ փառաց զօրութեանն Աստուծոյ ասի, և ոչ զլանօդ փառացն հրատարակէ, զայր լուսոյ՝ որ ի լոյսն բնակի յանմատոյց, անեզրական և անիմացական, զոր ոմանք առ յոյժ յիմարութեանն եւ սնոտի բարբանջմանցն՝ մոլեզնեալը, ըստ զարտուղի ի խորհուրդս անկեալը. որ սակա տնօրինական և վասն մեր թափմանն, մինչեւ ծառայի կերպարան ասի լինել աստուածային փառացն, մինչ մերկանալ և թափուր գոլ ի հայրենական հաւասարութենէն մինչեւ ի խաչն: Եւ դարձեալ հայցեալ զհեռացեալսն առնուլ միւսանգամ, որ և անտեղի և սատանական մտաց յիմարումն: Զի թէ հայր յական մտաց յիմարումն: Զի թէ հայր յիս, եւ ես ի հայր ասէ փրկիչն, եւ դարձեալ ասէ թէ հայրն որ յիս բնակեալն է: Արդ՝ եթէ ըստ նոյունց կարծեացն իցէ, ապա ուրեմն նուազեալ իցէ

ի Հօրն փառաց, յաղագս ի միասին պատուակցութեանն՝ և համագոյութեան միածնին։ Այլ զայսոսիկ թողուք անդրնոցա կարծեացն և անիմաստ մտացն. և մեր ասասցուք զմերն. թէ ինձ բաւ լիցի պարծեկ՝ բայց միայն ի խաչն ջեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Արդ՝ պարծի չարչանօքն որով Աստուած փառաւրեցաւ, և Աստուած փառաւրեցաց զինքն¹. ոչ այլեւայլ աստուածք, այլ մի անքակութիւն միութեանն՝ կատարեալ անձնաւրութեամբը, և մի աստուածութեամբն, ընդ աստուածութեանն միացեալ մարմինն՝ ընդ ամենայն ազգակիցս մարմնոյս. զառաջինն հայցէր զփառս, զոր օգիւն եւ ճաշակմամբն մերկացաւ։ Զայսոսիկ ըզմաւ ածելով սիրելիք, զգուշութեամբ նայեցարուք ի պատճառս փրկութեան մերոյ, որ վասն մեր թափեաց զինքն ի ծառայի կերպարանս։ Ի բարձրութենէ խոնարհեալ էառ նա զաղբատութիւնն մեր, փոխանակէ զարգանդ կուսին՝ քերորէական աթոռոյն։ բնակեալն ի լոյս անմատոյց, իջանէ ի մսուր խանձարբապատեալ ընդ աշմէ ծնողին նստեալն. և որոյ երկինք աթոռ էին և երկիրս պատուանդան ոտից, ունէր տեղի ուր զգլուխն զնէր։ Թագաւորն թագաւորաց՝ ի տան հիւսան ընդունի զաղզակցութեան համարն. ի սերորէից և ի քերորէից փառարանեալն, ի հրէից հայհոյեալ թշնամանի։ Հալածի յիւրոցն, ապտակի զանիւ, բեւեռի ի իայտի, ընդ մահու զրաւի, և սահմանի թաղմամբ։ Այսիւ եղանակաւ զգրկութիւն աշխարհի վերաստեղծեաց. այլ թերեւս և աշխարհի վերաստեղծեաց. այլ թերեւս և լայս ոչ է պարտ զնել ընդ զրուանաւ² ծածկութի, որով զաշխարհս ամենայն դրսաց³ ուռկանաւն ճշմարտութեան։ եւ թեանն, և յետին տնանկութեամբն. զի լինչ քան զայն աղբատութիւն առաջին ամառէ զվերջին կայցէ, որ անզամ ոչ զարգան կամ պաշար ի ճանապարհի, այլ մի պարեզօտ որ ծածկոյթ մերկութեանն մի պարեզօտ որ ծածկոյթ մերկութեամբն. որ առանց կօշկաց, որք ձացոցիք աշխարհի են. որք զիմաստս աշխարհի պապանձեցուցին, և զհպարտացեալ ամբարտաւանութիւնն նկուն կացուցին փառօքն որովք ճոխացան այպանութեամբ խաչին. որ կորուսելոցն յիմարութիւն է, եւ փրկելոցս զօրութիւն Աստուծոյ. եւ փառք ի փառաց անկելոյն։ Այս է պատճառ փրկութեան աշխարհի, և գործի կենաց սորին։ Այս է ձեւ զատապարտութեան մահու, փառք Քրիստոսի Աստուծոյ՝ որ ասի երկնից պատմօղ։ իսկ թէ երբ, կամ յորում ժամանակի, զիտողացն՝ ոչ ի ծածուկ այսորիկ կարծին, իսկ որք անգիտանայցք՝ մատուցէք զլսելիսդ ունկընզութեամբ սրտի մտօք, զի վայելեսջիք ի խորհուրդ մեծի աւուրս այսորիկ։ Երամն՝ երեք հարիւր և քսան փրկութեան աշխարհի եւ նորոգման տիեզերաց, եւ գալստեան Աստուծոյ բանին. յեօթներորդ ամի թագաւորութեանն կոստանդիանոսի սերաստեայ ինքնակալի, որդւոյ կոստայ թագաւորի սպանիացւոց, յորում ընդդէմ բարբարոս ազգացն սպառազինեալ և պարտեալ ի նոցունց, ընկղմեալ լինէր ի խորս տրտմութեան։ Խնդրէր զօնականութիւն ի հզօրագունէ ումեմնէ յԱստուծոյ զտանել. անփոյթ արարեալ զորոյ յառաջազգոյն պատուէր զպաշտամունսն, զմեծարեալն ի Դիոկետիանոսէ եւ ի նորուն նմանեացն։ Մինչ զայսոսիկ խորհրդածեալ իմաստասիրէր, զմիջօրեայ աւուրն սկիզբն առնոյր աշխարհական եւ ազատեցուցիչ փրկութեանն, երկնից պատմել զփառս Աստուծոյ. որում ի խնդրի երեալ կայր օգոստոսական անձն. նկատէր հրաշալի երեւումն առներ արեգականն զորով, և զիւրն փայշեցունէր զպայծառութեանն ձեւ քանզի նշանաւն և հիացմամբն զթագաւորն կեցուցանել առ ի մերձակայս բարբառէր վայելեալ արդեօք ի նոյն աստուածակերտ

Qեռազիրն ունէր յինքն :

Զեռազիրն ունի զերումաւ, ուղղեցինք ըստ իւղն։
Զեռահերն ունի ող ասագ, ուղղեցինք ըստ իւղն։

Leviathan by Thomas Hobbes, 1651, trans. by Francis Bacon, 1618.

սքանչելեացն: Եւ յամենեցուն վկայելոցն՝
առեալ հաստատութիւն իրազործութեանցն,
որ ստացաւ զինքն Քրիստոսի աշակերտ, և
զօրացեալ ապաւինելով նշանաւն և առեալ
զյաղթութիւնն անպարտելի զօրութեամբն
յամենայն ժամանակի յիւրոյ թագաւորու-
թեանն: Իսկ ի գալ լրման ժամանակի՝
և յերեւել Աստուծոյ բանին, Աստուած
զծառայի առեալ զկերպարանս, մեծա-
տունն տնանկանայ. և անհասական բնոււ-
թիւնն, ընդ հոսանուտ խառնի. և թա-
գաւորն՝ ծառայ յորջորջի. և անմեռն՝ ընդ
մեռելուսիս միաբանի, և զիւր աղախինն՝
մայր անուանէ. և սերովքէից տէրն՝ ընդ
երեսս թքանի, զօրաւորն՝ տկարանայ կտ-
մօք. և բանիւ երկնի և երկրի ստեղծիչն՝
ի փայտի բեւեռի. և որ յաթոռ փառաց՝
ընդ Հօր և սուրբ Հոգույն երկրպագի, ընդ
աւազակս խաչի. և որ զհողս զայս պատ-
կերեալ ձեւացոյց, ի հող մահու սերմանի
անշնչացեալ. պահապանն իսրայելի եւ
ամենայն արարածոց՝ ի զինուորաց պահի:
Ընտրէ և առաքէ զոչ պիտանիսն. և հաճի
ընդ բազմաց զարշելիս. զձկնորսացն յարգէ
զազգսն, և զտղէտս կացուցանէ խորհըր-
դակիցս Աստուծոյ հազարապետութեանն:
Զտկարս զօրացուցանէ, եւ զաննշանսն
պատրաստէ ի պատերազմ: Նա՝ և մինն
ի նոցանէ յաւելու առ նոցին թշնամիսն.
ընդդէմ զրահից և սաղաւարտից՝ և վաղա-
կաւոր սուսերամերկաց, հանդերձ պէսպէս
կազմածովք յօրինելոց. զմիայն բանիւը
պատերազմեցոյց՝ և աներեւոյթ զօրու-
թեամբն ընդ մարմնաւոր իշխանութեանցն՝
և անմարմին թշնամոյն հակառակեցան:
ի սուր սուսերի մաշեցան, և բարկոծեալ
յաշխարհէ փոխեցան, ի հուր մատնեցան,
և ի ծով ընկեցան. տեսիլ եղին հրեշտա-
կաց և մարդկան, և այնու զյաղթութիւն
սովոյ արհամարհել ուսուցին. և ի կա-
նանց որոշել օրինագրեցին. զարուաց
խառնակումն ի բաց մերժեցին. և զկե-
րակրոցն և զըմպելեացն զյաճախութիւն
խոտան համարեալ ի բաց ընկեցին. զըմ-
տացուածս հայրենիս՝ և զբազմաժամա-
նակեայ զպաշտամունս ուրացեալ՝ յետո

1. զեռագիրն ունի՝ ուրախիացիուն . սրբագրեցինք
եւստահն :

2. Զետագիրն ունի՝ քրթիչմանց, սրբագրեցինք ըստ
իմաստին:

ասատիւ զօրութեամբն, որ ակնարկելով
միայն բաւական էր առնուլ զյաղթու-
թիւնն . և ոչ յոսկի համակել և լինել
ամենայն կարողութեամբ . և ոչ ի զէնս
ապաստանել, որոյ բանն հատու է քան
զամենայն սուր երկսայրի . և ոչ զիմաս-
տնոցն և զիսորհրդականացն բուռն հար-
կանել, որով իմաստութեամբն՝ զերկինս
կախեաց, և հանճարովն՝ զերկիրս հաս-
տատեաց . և զմարդն՝ յինքն պատկերեաց .
և ոչ զթագաւորս բարեկամեաց յինքն
յարաձգելով . որոյ թագաւորութիւնն ոչ
ունի զվադման : Այլ և զաղցասս յարու-
ցանէ, մինչեւ յաթոռ արքայութեան նըս-
տուցանել . և վասն այսորիկ յապաղէ
տալ զգիտութիւն աստուածային . տնօրի-
նել զիրկութիւնն առ մեծամեծս և վեհս
աշխարհիս այսորիկ, զի մի այնպիսեօք
զօրութեամբք կակզասցի բարողութիւնն,
և մի՛ ի կարծիք մտեալ՝ խոռվեսցին հե-
թանոսք լեզուագարելով . իրբեւ ոչ եր-
կնային զօրութեամբն առնուլ զհաստա-
տութիւն հաւատոյն, այլ ի ձեռն սաստից
թագաւորաց, և ահարկու իշխանաց աշ-
խարհիս . սրով և հրով յոչ կամաց մտին
ընդ մեծի լծոյ աւետարանին : Եւ կամ
դարձեալ՝ գանձուք և պատուվ և պէսպէս
վլայելչութեամբք և ընծայիւք խաթեալք՝
յայնոսիկ ճողովրեցան մինչեւ յամս յայս,
որ երեք հարիւր և քսան ըստ փրկական
խոնարհութեան ծեառն մերոյ : Յայնժամ
զմիւս կարծիսն բառնայ ի միջոյ, զի մի՛
ասիցեն հեթանոսք թէ ուր է Աստուած
նոցա . և հրէական ազգն ատեցեալք յԱս-
տուծոյ իրբեւ հակառակս նմին համարէէն
լանփոյթ առնելոյն զհաւատացեալսն իւր .
և սակս այնորիկ՝ հալածանօք և մահ-
ուամբ ստացեալ զժողովուրդն՝ փրկու-
թեամբ ազատէ, և զծածուկ զօրութիւնն
յայտ յանդիման կացուցանէ, փառօք որով
լանձն փառաւորեաց . և զայն՝ երկնից
զատմելով պայծառապէս ցուցանէ . ոչ
զատմելով պայծառապէս ցուցանէ . ոչ
պաշտելով, և մահապարտի երկիր պագա-
գանել . այս այպանութիւնը՝ փառք Քրիս-
տոսի : Արդարեւ փառք, և մեր փրկութիւնն
յաւիտենական . և զարհամարհողան՝ երկըր-
պագուս զործեաց, և զհայհոյիչ թագաւորն՝
նմին օրհնաբանիչս կացոյց, և պարծանս
զնախատինան արար, և ի մահուանէ ի
կեանս փոխեաց . հաւատացեալ երրոր-
դութեանն՝ եղեւ անդամ և մարմին Քրիս-
տոսի . զխաղաղութիւն սերմանեաց, եւ
զհեզութիւն քաջութեան արմատացոյց :
Հոռմայեցոց թագաւորութեանն եղեւ
զարդ, և ամենայն զօրութեանց թշնամույն՝
եղեւ կործանիչ : Երարձ զզօրս հեթանո-
սաց թագաւորութեանն ի ջուրս Դանուբայ
գետոյն : Խորասոյզ արար գաւազանաւ
Քրիստոսեան փայտին նշանաւն, առաւել
քան զփարաւոն զաւազանաւն Մովսէսի :
Զի այն փայտ զփարաւոնին միայն ունէը
զընկղմումն . իսկ այս նշան փայտիս՝ զան-
մարմին փարաւոնն . զոյզընթաց ընդ նո-
սին և զթագաւորս ընկղմէր ի հոսանս
գետոյն . զայս զործեաց աստուածային
երեւումն խաչին : Այլ աղօտաբար ցու-
ցեալ, և զճշմարտութիւնն հաստատեաց,
զստութիւնն արմատաբի խլեաց, և զեղ-
ջիւր եկեղեցոյն բարձրացոյց : Ծաղը և
այզն կատականաց կացոյց զմնոտի դիցն
յամառութիւնն պաշտօնէիւքն իւրեանց :
Այս է առաջին ազատութեան եկեղեցոյ
պատճառք, եւ առաքելական բարողու-
թեանն հաստատութիւն, և հալածանացն
բարձումն, և կուալաշտութեանն կործա-
նումն : Իսկ զինչ առ երկրորդս և զոր
այսօր ընդհանրական տօնէ եկեղեցի . մա-
նաւանդ հրաշափառագոյն և բարձրագոյն
քան զառաջինն : Թէէպէտ զմի ձեւ օրի-
նակի տպաւորեալ ունի յինքեան, այլ
զայլ և զայլ ունի զիմաստիցն զիսորհուրդս :
Նշան խնդրէին երբեմն հրեայքն ի ծեառնէ
փորձելով տալ յերկնից, զոր հրաժարէ
անփոյթ առնելով ազգին չարի և դառ-
նացովի : Զի ոչ ըստ հաւատոյ՝ այլ փոր-
ձիւ եւ այպանելով : Իսկ յետ անցեալ
ժամանակաց՝ տուեալ լինի հայցելին, ոչ
յատուկ հրէից՝ այլ բոլոր հեթանոսաց :

Աքանչելի և թափանցիկ լուսով ցուցեալ։ Ե՞րբ այս, կամ յորո՞ւմ ժամանակի. յաւուրս կոստայ և կոստանդինայ՝ երկուց եղաց ինքնակալաց օգոստից ուստեղաց. մեծ և յաղթօղն կոստանդիանոս. ի ժամանակին յորում արիանոսացն յառաջադէմ զարգանայր մոլորութեանն հերձուած։ Քանզի տիրեցելոյն ի մեծ քաղաքն կոստանդինուազօլիս. և իշխեցելոյն նմին կոստանդիանոսի, կարծիք ինչ ի նմա ձգէին ի բազմաց, իբրեւ թէ հաւանութիւն ետ կարծեացն աղանդին արիանոսացն. զնուցայն խորհել զանվայելուչսն. այլ ոչ արժանապէս, զնորա մեծութեանն և զբարեպաշտութեանն համբաւեալ, վասն զի հեռի էր յայնպիսի խորհրդոց։ Այլ յաղագս սաստիկ ջերմ սիրոյն զոր ունէր առ ազգս ըրիստոնէից, յորդառատ ըգինամսն աճեցուցանէր առ եկեղեցիս Աստուծոյ զիսաղաղութիւն բորբոքել ջանայր ի մէջ խոստովանողաց Քրիստոսի, առ ի բառնալ ի միջոյ զատելութիւն յընտանեաց հաւատոյն։ Եւ առ այլսն ունել զթշնամութիւն սրտմտութեան պատերազմաւն. զէթանուսացն քակելով զզօրութիւնն յունայնութեան պաշտամանցն, զոր և ի նորա բարեպաշտ թագաւորութեանն եղեւ արժանաւոր մեծ քաղաքն Երուսաղէմ, ունելով զգլուխն նստեալ յաթոռ հայրապետութեան զերանելին կիւրզոս, որ և արժանաւոր եղեւ այնմ սքանչելի մեծ աստուածյայտնութեանն։ Ոչ կարօտիմք լինել այր յառնէ, կամ կին ի կնոջէ, կամ անհաւատ ի հաւատացելոյն ուսանիլ

1. Զեռազիրն ունի՝ ծիստաթեաց. ուղղեցինք ըստ
իմաստին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՄԱՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ըստայելով մեր ընթերցողաց վերագոյն հրատարակուած այս ճառը, մեր դիտումն եղած է նախ՝ ըերել մեր Նախնեաց հոգեկան հաղորդակցութիւնը փրկագործութեան խորհրդոյն ներկայ իննեւտասներորդ դարավարձին առթիւ. եւ երկրորդ՝ նույիրել ի վայելումն ուտումնատենչ բանասիրաց մեր ազգային մատենագրութեան գամնձարանին մէջ պահուած թանկագին գոհար մը:

Ս. Գրիգոր Աստուածաբան Նազինազացւոյ այս Խերքողեանս ի Սուրբ Խաչո Յատուածընկալ արժանաւոր պատին է բոլորուած այն սրբազն խաչին որուն վրայ աստուածաբանին օհաւարար Գառն ողջակիզուեցաւ մարդկային փրկութեան համար:

Ճառիս վարդապետական եւ բարոյախօսական բովանդակությունը պայման և անարատ, - վիճաբանական՝ մասնաւորապէս ընդդէմ Ապողինարեանց մոլորութեան, անարատ չափագովական՝ մարդեղութեան խորհրդեան ուղիղ վարդապետութեամբ, - ինչպէս եւ ջատագովական՝ մարդեղութեան խորհրդեան ուղիղ վարդապետութեամբ, - ինչպէս նաեւ սրբազն բեմասացի գքական գեղեցիկ ոճը՝ սեղմ եւ կորովի ճարտասանութեամբ, - բացատրութեանց յշկեալ ծեւն ու ախորժելի թուիքն, եւ ամէն պարագայի մէջ շնոր- հալից օծութեամբ լեզուն, ապահով գքաւականներն են գրութեանս վաւերականութեան, հալից դարձեալ ապահովացուցիչ վկայութիւն մ'է նաև հայկական թարգմանութիւնը իր որուն դարձեալ ապահովացուցիչ վկայութիւն մ'է նաև հայկական թարգմանութիւնը իր հնութեամբ եւ լեզուի յատուկ եզականութեամբ որ մեր ոսկեղինիկ դարու երկրորդ հնութեամբ աւելի հուշակաւոր եւ դարձերու հարուածներէ անցողոքորդ՝ Խորենացւոյ մատին, ամենին աւելի հուշակաւոր եւ դարձերու հարուածներէ անցողոքորդ՝ Կոմիտաս:

Մեր հրատարակութիւնը եղած է Սայլուս-4:
Գերատիկ համաձայն, որ գրուած է Երուսաղեմայ մէջ
գիր (նոտր գրութեամբ) Գ. Ճառշնորի համաձայն, որ գրուած է Երուսաղեմայ մէջ
1637 ին ժախսւք Տէր Զաքարիա Խլովյա աւագերիցու եւ ձեռամբ Մկրտչի Ղազարենց: